

## ԱՆԱՀԻՏ ԼԱՆԱԲԵԿՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների ուսուցման ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, պրոֆեսորի պաշտոնակատար*

## ՄՈՆԻԿԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների ուսուցման ամբիոնի դասախոս*

### ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՌԱԾՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀՈՒՐԶ (ԲՈՒՀԱԿԱՆ ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ)

Հոգվածում քննարկվում են անգլերենի առաձների և ասացվածքների դասավանդման առանձնահատկությունները ոչ մասնագիտական բաժիններում՝ հաշվի առնելով ուսուցման ընթացքում առաջացած խնդիրները: Քննարկվում է նաև մի շարք մեթոդների կիրառման արդյունավետությունը, քանի որ անգլերենի, ինչպես ցանկացած այլ օտար լեզվի ուսուցումը պահանջում է ծանոթացում ուսուցանվող լեզվի մշակույթին, նրա պատմությանը, ավանդույթներին, ազգային տեսլականի առանձնահատկություններին, իսկ առակներն ու ասացվածքներն ամբողջացնում են վերը նշված բոլոր կետերը:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ.** առակներ և ասացվածքներ, անգլերենի դասավանդում, թարգմանության խնդիրներ, մշակույթային առանձնահատկություն, դասավանդման մեթոդներ:

Օտար լեզուների ուսուցման գործընթացում առաձների և ասացվածքների օգտագործման մեթոդական և գործնական արժեքը մեծ է: Դեռևս միջնադարյան Եվրոպայում առակներն ու ասացվածքները կիրառվում էին որպես լատիներենը ուսուցանելու հիմնական միջոց: Առակներն ու ասացվածքները՝ որպես ամբողջական միավոր, իրենց մեջ ներառում են տվյալ ժողովրդի կենսական փորձի մեծ մասը: Բանահյուսության

ողջ բազմազանության և հարստության մեջ դժվար է գտնել ավելի հետաքրքիր և ուսումնասիրության արժանի ժանր, քան առաձներն ու ասացվածքներն են, որոնցում արտացոլված է կոնկրետ լեզվի սոցիալական, մշակութային և պատմական կյանքը:

Պետք է նշել, որ օտար լեզուների ուսուցման գործընթացում առաձների և ասացվածքների ուսուցումը մեթոդապես ամենաքիչ մշակվածն է, չնայած որ առաձներն ու ասացվածքները մշտապես եղել են բանասերների, լեզվաբանների, մեթոդաբանների և ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Հարկավոր է նշել, որ առաձներն ու ասացվածքները մինչև վերջին ժամանակները գլխավորապես ուսումնասիրվել են պատմական-գրական առումով, և դրանցով հիմնականում զբաղվում էր միայն բանահյուսությունը [4, էջ 15]: Լեզվաբանները քիչ էին հետաքրքրված այս բնագավառով, քանի որ այն չէին համարում լեզվաբանության ուսումնասիրության առարկա, սակայն դարձվածաբանության զարգացմամբ հնարավոր դարձավ դրանց՝ որպես կայուն լեզվական միավորի լեզվաբանական ուսումնասիրությունը: 20-րդ դարի երկրորդ կեսին դարձվածաբանական միավորները, ըստ սահմանման ծավալի, տարանջատվեցին երկու ուղղությունների՝ լայն /ընդարձակ/ և նեղ: Դարձվածաբանական միավորների ընդարձակ սահմանման կողմնակիցները՝

Վ.Վ.Վինոգրադովը, Վ.Ն. Տելիյան, Մ.Տ. Տագիևը, Ա.Վ. Կունինը, գտնում էին, որ առաձևերն ու ասացվածքները դարձվածաբանական միավորներ են, իսկ նեղ սահմանման կողմնակիցներն էլ՝ Ն. Ն. Ամոսովան, Ա.Ա Սմիրնիցկին, Ա. Մոլոտկովը, գտնում էին, որ դրանք դարձվածաբանական միավորներ չեն, այլ միայն գրական ժանրի բաղկացուցիչ մասերը:

Վերջին տասնամյակների ընթացում ասութաբանական բազմաթիվ ուսումնասիրությունների, ինչպես նաև գիտական աշխարհում առաձևերի և ասացվածքների լեզվական կարգավիճակի մասին զանազան կարծիքների շնորհիվ մեթոդիկայում ձևավորվել է արդեն ավանդական դարձած մոտեցում՝ համաձայն որի՝ առակներն ու ասացվածքները գրական, բանահյուսական միավորներ են, որոնք հստակ ներկայացնում են ժողովրդի, նրանց կյանքի ընկալման, պատմա-աշխարհագրական, ինչպես նաև խոսքային առանձնահատկությունները: Յուրաքանչյուր լեզվում դրանք ունեն իրենց առանձնահատկություններն ու բնորոշ հատկանիշները: Առաձևերն ու ասացվածքները կոնկրետ հեղինակ չունեն, դրանք մեկ նախադասությամբ արտահայտում են ընդհանուր, ավանդական հայացքներ:

Ընտրված թեմայի **արդիականությունը** պայմանավորված է անգլերենի դասավանդման գործընթացում առկա խնդիրներով, քանի որ այսօր լեզվի արդյունավետ ուսուցումը չի կարելի պատկերացնել՝ առանց ուսուցանվող լեզվի մշակութային առանձնահատկությունները հաշվի առնելու:

Առաձևերի և ասացվածքների ուսուցումը, ինչպես վերը նշվեց, ամբողջական չի կարելի համարել, եթե լեզու սովորողը չի տիրապետում հաղորդակցական, դարձվածաբանական միավորներին: Այսինքն՝ լեզվի ուսուցման ժամանակ առակների և ասացվածքների ուսուցումը ինքնանպատակ չէ և միտված է հաղորդակցման հմտությունների

զարգացմանը:

Անգլերենի առաձևերի և ասացվածքների դասավանդման նպատակները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝

1. ապահովել խոսքային էթիկայի առանձնահատկություններին տիրապետելու հմտությունը,

2. զարգացնել հաղորդակցման հմտությունները, որոնք ապահովում են լեզվի ակտիվ կիրառումը տարբեր ոլորտներում:

Անգլերենի առաձևերի և ասացվածքների դասավանդումը բարդ գործընթաց է թե՛ դպրոցում և թե՛ բուհ-ում: Այս հանգամանքը կապված է մի շարք խնդիրների հետ, որոնցից կարելի է նշել՝

1. մշակութային անբավարար գիտելիքներն ու մշակութային տարբերությունները,

2. թարգմանական խնդիրները:

Պետք է նշել, որ ժամանակակից կրթական գործընթացում քիչ ուշադրություն է հատկացվում սովորողների մշակութային գիտելիքների բարձրացմանը, հատկապես ծանր է վիճակը այլ մշակույթների ուսումնասիրության ոլորտում [3, էջ 15]: Հարկ է նշել որ, մշակույթի ուսումնասիրությունը սահմանափակվում է կոնկրետ դասավանդվող առարկայի՝ գրքի մեջ եղած նյութով, որն էլ, անշուշտ, բավարար չէ լեզուն, մշակույթը և տվյալ ազգին բնորոշ առանձնահատկությունները հասկանալու համար, քանի որ լեզուն սոցիալական երևույթ է, և լեզվին չի կարելի տիրապետել սոցիալական միջավայրից դուրս, այսինքն՝ առանց այլ մարդկանց և մշակույթի հետ հաղորդակցվելու: Լեզուն ծառայում է որպես մշակույթի հիմնական միջոց, որը կազմակերպում է մարդկանց փոքր, և ինչպես մշակույթը, այնպես էլ լեզուն մշակում է համընդհանուր ընդունված հասկացություններ: Լեզուն և մշակույթն են, որ բնութագրում են ցանկացած էթնոս՝ անկախ այն բանից, թե էվոլյուցիայի որ շրջանում են դրանք գտնվում: Եվ վերջապես, մշակույթը ներառված է

լեզվի մեջ այն իմաստով, որ ողջ մշակույթը կարող է արտացոլվել տեքստերի մեջ: Վերը ասվածից ակնհայտ է դառնում, որ անգլերեն դասավանդողները մեծ ուշադրություն պետք է դարձնեն առաձների և ասացվածքների ուսումնասիրությանը, քանի որ դրանք անգլերենի անբաժանելի մասնիկներն են և բնորոշում են լեզուն և ազգը: Այսինքն՝ առանց առաձների և ասացվածքների հնարավոր չէ պատկերացնել անգլիացիներին և առհասարակ աշխարհում գոյություն ունեցող ցանկացած ազգի: Ամեն դեպքում իրողությունն այն է, որ որքան կրթված է անհատը, այնքան շատ առաձներ և ասացվածքներ է կիրառում իր խոսքում:

Անգլերենի առաձների և ասացվածքների դասավանդման ընթացքում հաջորդ խնդիրը կապված է թարգմանության հետ: Դասավանդողի համար բավականին բարդ է կողմնորոշվել՝ ինչպես թարգմանել և ապա մեկնաբանել առաձներն և ասացվածքները: Բարդությունը նրանում է, որ անգլերենի առաձներն ու ասացվածքները հայերենում ունեն իրենց համարժեքները, և շատ են դեպքերը, երբ դժվար է կողմնորոշվել, թե որ հայերեն համարժեքն է անհրաժեշտ օգտագործել: Պետք է նշել, որ անգլերենի առաձներն ու ասացվածքները կարող են թարգմանվել տարբեր կերպ [1, էջ 10]՝

1. բառացի թարգմանություն,
2. իմաստային թարգմանություն,
3. հայերեն համարժեքի միջոցով թարգմանություն:

Բառացի թարգմանությունը պարզ, շատ հաճախ անհասկանալի թարգմանություն է, քանի որ շատ դեպքերում առաձներն ու ասացվածքները բնորոշում են որոշակի իրավիճակ, որոշակի միտք, որը հասկանալի է միայն տվյալ լեզուն և մշակույթը կրողին:

Օրինակ՝

It is raining cats and dogs /Անձրևում է շներով և կատուներով/:

Իմաստային թարգմանության դեպքում փորձ է կատարվում հասկանալ նախադասության իմաստը և ապա տալ դրա հայերեն համարժեքը:

Օրինակ՝

Distance makes the heart grow fonder /Գնա՛, մեռի՛ր, արի՛՜ սիրեմ՛/:

Հայերեն համարժեքի միջոցով թարգմանությունը ոչ միշտ է արդյունավետ լինում, քանի որ շատ հաճախ դժվար է գտնել կոնկրետ առաձը կամ ասացվածքը, սակայն պետք է նշել, որ բազմաթիվ անգլերեն առաձներ և ասացվածքներ ունեն իրենց հայերեն համարժեքը:

Օրինակ՝

He laughs best who laughs last /Ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում/:

Առաձների և ասացվածքների թարգմանության ու իմաստային ճիշտ ընկալման գործում էական դեր է խաղում նաև նախդիրների ճիշտ մեկնաբանումը: Նախդիրները անգլերենի քերականության փոքրիկ մասն են կազմում, սակայն, չնայած այս հանգամանքին, դրանք կարևոր իմաստային դեր ունեն: Այն է՝ տարբեր խոսքի մասերը միացնում են միմյանց և արտահայտությանը տալիս են յուրահատուկ իմաստային երանգավորում: Նախդիրներն օգտագործվում են գրեթե բոլոր նախադասություններում, և դրանցից յուրաքանչյուրն ունի իր բառային իմաստը, որը կարող է ցույց տալ ուղղություն տարածության մեջ, ժամանակ, տարբեր վերացական հարաբերություններ և այլն:

Առաձների և ասացվածքների դասավանդման ժամանակ հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել նախդիրների թարգմանությանը, քանի որ դրանց սխալ թարգմանությունը կարող է բերել իմաստային խեղաթյուրման:

Այժմ անդրադառնանք այն նախդիրներին, որոնք հաճախ են հանդիպում անգլերենի առաձներում և ասացվածքներում:

Պետք է նշել, որ միևնույն նախդիրը կարող է ունենալ տարբեր իմաստներ,

որոնք բաժանված են կոնկրետ իմաստային խմբերի, օրինակ՝  
“In” նախդիրը ունի հետևյալ իմաստները՝

#### ներառում տարածությունում կամ սահմանում

1. *Lightning never strikes in the same place twice.* [5, էջ 105]

Կայծակը երբեք նույն տեղը երկու անգամ չի հարվածում:

2. *Sickness in the body brings sadness to the mind.* [5, էջ 106]

Մարմնի հիվանդությունը խելքի վրա էլ է ազդում:

#### իրավիճակի սահմանափակում, գնահատում կամ պայման, հարաբերություն, գործողություն

1. *A friend in need is a friend indeed.* [5, էջ 107]

Ընկերը ճանաչվում է կարիքի ժամանակ:

2. *If you are patient in one moment of anger, you will avoid 100 days of sorrow.* [5, էջ 107]

Եթե համբերատար լինես զայրույթի պահին, ապա կխուսափես 100 օր զղջալուց:

#### վերացական կամ աննյութական երևույթ

1. *Better to reign in hell than serve in heaven.* [5, էջ 107]

Ավելի լավ է կառավարել դժոխքում, քան ծառայել դրախտում:

2. *Everything is good in its season.* [5, էջ 107]

Ամեն ինչ իր ժամանակին է լավ:

3. *All is fair in love and war.* [5, էջ 107]

Պատերազմում և սիրո մեջ բոլոր միջոցներն էլ արդարացված են:

#### Ուղղություն դեպի ներս

*Don't look a gift horse in the mouth.* [5, էջ 107]

Նվիրած ձիու բերանը չեն նայի:

“With” նախդիրը ունի հետևյալ իմաստները՝

#### Ուղեկցված, ուղեկցվող

1. *Appetite comes with eating.* [5, էջ 109]

Ախորժակն ուտելիս է բացվում:

2. *To kill two birds with one stone.* [5, էջ 109]

Մեկ զարկով երկու նապաստակ սպանել:

#### հակառակ, ընդդեմ

1. *To fight with one's own shadow.* [5, էջ 109]

Կռվել սեփական ստվերի հետ:

#### մասնավոր, որոշակի հարաբերություն

1. *Eat and drink with friends but do not trade with them.* [5, էջ 115]

Կեր և խմիր ընկերներիդ հետ, բայց առևտուր մի արա նրանց հետ:

2. *A bad workman quarrels with his tools.* [5, էջ 115]

Վատ աշխատողը լեզու չի գտնում իր գործիքների հետ:

Առակների և ասացվածքների դասավանդման արդյունավետությունն ապահովելու համար, հաշվի առնելով նշված բոլոր խնդիրները, դասավանդողներից պահանջվում է համապատասխան մեթոդների կիրառում: Նման թեմայի ներկայացումը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն, քանի որ ներկայացվող նյութի ընկալման համար բավարար չէ ուսումնառողին միայն բովանդակության մատչելի և հասանելի ներկայացումը, այլ անհրաժեշտ է, որ դասախոսը կիրառի տարբեր մեթոդներ, պատրաստի աշխատանքային նյութեր, որոնց կիրառման շնորհիվ ուսումնառողը կամա, թե ակամա կդառնա դասապրոցեսի մասնակից: Ինչպես գիտենք, դասընթացի կազմակերպման պատասխանատվությունը ամբողջովին կրում է դասախոսը: Սակայն ըստ ուսանողակենտրոն ուսուցման կանոնների՝ նա դասընթացի ժամանակ պետք է լինի ուղղորդողի դերում, հետևաբար այսօր դասախոսը պետք է լինի հմուտ, դասընթացը կառավարի այնպես, որ մի կողմից ուսանողը լինի հիմնական դերակատարը, իսկ մյուս կողմից դասախոսը կարողանա ինչ-որ իմաստով ծրագրավորել և իրականացնել ամբողջ գործընթացը: Այսպիսով՝ համապատասխան մեթոդների կիրառումը թույլ է տալիս ուսուցումը դարձնել արդյունավետ:

Անգլերենի առաձևերի ու ասացվածքների դասավանդումը արդյունավետ և առավել հետաքրքրաշարժ դարձնելու համար կարելի է կիրառել մի շարք մեթոդներ՝

1. մտազրոհ (brainstorming),
2. Զ. Վեննի դիագրամ,
3. դեպքի ուսումնասիրություն,
4. աուդիո տեսողական մեթոդ,

Մտազրոհը խմբի միջև մտքերի փոխանակության ընթացքում գաղափարների ստեղծման ու հարստացման մեթոդ է: Այս մեթոդը ակտիվացնում է

սովորողներին՝ խթանելով նրանց հետաքրքրությունը:

Առաձևերն ու ասացվածքները պատկերավոր կարելի է ներկայացնել Զ. Վեննի դիագրամի մեթոդի միջոցով: Վեննի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծով, որոնք ունեն հատման մակերես: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու համար:

Մի կողմում գրվում է անգլերեն ասացվածքը կամ առածը, իսկ մյուսում՝ հայերենը, հատման կետում էլ ուսանողները լրացնում են ընդհանրությունները:

|                                     |                                     |
|-------------------------------------|-------------------------------------|
| To kill two birds<br>with one stone | Մեկ զարկով<br>երկու նապաստակ սպանել |
|-------------------------------------|-------------------------------------|

Հաջորդը դեպքի ուսումնասիրության (case study) մեթոդն է, որի նպատակն է գտնել և վերլուծել իրական կամ երևակայական իրավիճակներում ներկայացված խնդիրները: Պետք է նշել նաև, որ տվյալ մեթոդը իր մեջ ինտեգրում է մի շարք մեթոդական հնարներ (մտազրոհ, բանավեճ, դերային խաղ, աուդիո-տեսողական միջոցներ):

Առաձևերի և ասացվածքների ուսուցման գործընթացում արդյունավետ է նաև աուդիո-տեսողական (Audio-Visual Presentation) ներկայացումների կիրառումը: Այս դեպքում ուսուցումը հիմնված է բացառապես տեսասահիկների, կինոնկարների, լուսանկարների, նկարազարդումների, տեսանյութերի օգտագործման վրա: Ուսանողներին տեղեկատվության մեծ մասը տեսողական է ներկայացվում, այլ ոչ թե բանավոր:

Տեխնիկական միջոցների կիրառումը դասընթացի ժամանակ հնարավորություն է ընձեռում դասախոսին կիրառել մի շարք մեխանիզմներ, որոնք ուսումնառողին հնարավորություն են տալիս ավելի հեշտ յուրացնել դասընթացի բովանդակությունը: Նշված մեթոդներ

որ լավագույն միջոց են հանդիսանում դասընթացների նախապատրաստման և իրականացման համար, որի շնորհիվ անգլերենի առաձների դասավանդման գործընթացում դասախոսը՝

- հոգեբանորեն նպաստում է ուսանողների կողմից նյութի յուրացման գործընթացին և բարձրացնում դասի արդյունավետությունը,

- բարձրացնում է ուսումնական ակտիվությունը,

- առաջացնում է հետաքրքրություն առարկայի նկատմամբ,

- նպաստում է տարածական աշխարհայացքի ձևավորմանը,

- մեծացնում է առարկան ուսումնաս-

սիրելու ցանկությունը:

Այսպիսով, կարելի է նշել, որ անգլերենի առաձների և ասացվածքների դասավանդումը չի կարելի դիտել լեզու և մշակույթ հասկացություններից դուրս, և այդ իսկ պատճառով դասավանդողները պետք է մշտապես հաշվի առնեն լեզվի դասավանդման գործընթացում հաղորդակցական, դարձվածաբանական միավորները, որոնք իրենց մեջ բազմաբնույթ բովանդակություն են ներառում, իսկ առաջարկված մեթոդներն էլ կնպաստեն հնարավորինս արդյունավետ դարձնելու տվյալ թեմայի դասավանդման գործընթացը:

### ՓՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Հ. Նազարյան «Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ», «Ամարաս», Երևան, 2000:
2. V.H.Collins, "A book of idioms with explanations", p. 25-35, 1997.
3. Ellis, N. C. (2008). Phraseology: The periphery and the heart of language. In F. Meunier & S. Granger (Eds.), Phraseology in foreign language learning and teaching (pp. 1-15). Amsterdam: John Benjamins Publishing Company.
4. Kunin A.V., "Anglo-Russian phraseological dictionary", p. 49, 1999.
5. Nazaryan A. H. Illustrated dictionary of English proverbs and sayings (with Russian and Armenian translations and equivalents), Yerevan 1999
6. Oxford Learner's dictionary (2015) Oxford University Press. Online resource: <http://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/proverb?q=proverb> [Last visited October 22nd 2017]

## ON PROBLEMS OF TEACHING PROVERBS AND SAYINGS /NON SPECIALIST DEPARTMENTS

**ANAHIT LALABEKYAN**

*PhD in Pedagogy, Assistant Professor of Kh.Abovian Armenian State Pedagogical University*

**MONIKA MARTIROSYAN**

*Lecturer at Kh.Abovian Armenian State Pedagogical University*

The article devoted to the study of teaching English proverbs and sayings and problems connected with them touched upon several important factors which affect greatly to the teaching process. The illustrated factors were the cultural differences between nations, unsatisfactory knowledge of cultures, problems with translations prepositions. Several methods of teaching proverbs and sayings were suggested

К ВОПРОСУ О ПРЕПОДАВАНИИ АНГИЙСКИХ ПОСЛОВИЦ И ПОГОВОРОВ  
(НА ВУЗОВСКИХ НЕСПЕЦИАЛИЗИРОВАННЫХ ОТДЕЛЕНИЯХ)

**АНАИТ ЛАЛАБЕКЯН**

*Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, заведующая кафедрой  
иностраннных языков, кандидат педагогических наук, доцент, и.о. профессора*

**МОНИКА МАРТИРОСЯН**

*Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна,  
кафедра иностранных языков, преподаватель*

В статье анализируются особенности преподавания английских пословиц и поговорок на неспециализированных отделениях с учетом проблем, возникающих в процессе обучения. Обсуждается также эффективность применения некоторых методов, поскольку изучение английского языка, как и любого другого иностранного языка, требует ознакомления студентов с культурой изучаемого языка, его историей, традициями, с особенностями национального видения его развития, а пословицы и поговорки обобщают все вышеуказанные пункты.